Ղ-45

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆԻ

ՍԱՈՒԴԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1979-2011 ԹԹ.)

Է.00.02 ‹‹Համաշխարհային պատմություն›› մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. Ռ. Կ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Պ. Փոլադյան

պ.գ.թ., դոցենտ Գ.Գ. Գևորգյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 24-ին, ժամը 13:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող, 24/4, 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար պ.գ.թ. Գ.Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Սաուդա-իրանական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական և գործնական նշանակություն: 2011 թ. «արաբական գարնան», հատկապես 2016 թ. հունվարին Սաուդյան Արաբիայում հայտնի շիա քարոզիչ Նիմրա Ալ-Նիմրիի մահապատժի հետևանքով սրված սաուդա-իրանական հարաբերություններում առկա հակասությունները ճիշտ ընկալելու տեսանկյունից կարևոր է 1979-2011 թթ. սաուդա-իրանական հարաբերությունների բազմակողմ ուսումնասիրությունը:

Սաուդյան Արաբիան, տարածաշրջանում զբաղեցնելով կարևորագույն աշխարհագրական դիրք, արաբական և իսլամական աշխարհի կրոնական ու մշակութային կարևորագույն կենտրոններից մեկն է: Այստեղ են գտնվում իսլամական աշխարհի երկու սրբազան քաղաքները՝ Մեքքան և Մեդինան, իսկ սաուդյան թագավորը համարվում է զույգ սրբավայրերի պահապանը:

Սաուդյան Արաբիան մշտապես գործուն, երբեմն էլ որոշիչ դերակատարություն է ունեցել մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և կրոնական գործընթացներում:

Տարածաշրջանում Սաուդյան Արաբիայի հիմնական մրցակիցն է Իրանը, որի հետ հարաբերությունները հատկապես 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո ձեռք բերեցին «կայուն հակամարտության» բնույթ: Իրանն աշխարհի միակ շիայական կրոնապետությունն է: 1979 թ. հեղափոխությունից հետո Իրանը հեղափոխությունն արտահանելու փորձեր էր կատարում, այդպիսով ձգտելով հասնել տարածաշրջանային գերիշխանության: Դրանով էր պայմանավորված շիայական Իրանի և սուննիական Սաուդյան Արաբիայի հարաբերությունների սրումը և իսլամական աշխարհում միանձնյա գերակայություն ունենալու այս երկու պետությունների միջև առկա մրցակցությունը:

Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև առկա են մի շարք խնդիրներ, որոնց քննությունը հնարավորություն է տալիս առավել ընդգրկուն պատկերացում կազմել Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցող քաղաքական գործընթացների և տարածաշրջանային գերիշխանության համար մղվող պայքարի վերաբերյալ:

Աշխատանքի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ Սաուդյան Արաբիայի և Իրանի համագործակցությունից և նրանց միջև առկա կրոնական և քաղաքական հակասությունների խորացման աստիճանից է կախված տարածաշրջանային անվտանգությունը և կայունության պահպանումը, ինչպես նաև տարածաշրջանի երկրների և առհասարակ իսլամական աշխարհի երկրների համախմբումը:

Սույն թեմայի արդիականությունը կայանում է նաև նրանում, որ ԽՍՀՄ փլուզումից հետո և նոր միջազգային իրավակարգի ձևավորման ժամանակաշրջանում, Մերձավոր Արևելքը ենթարկվում է խորքային քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրոնական ձևափոխման: Այս գործընթացը տեղի է ունենում աշխարհաքաղաքական սրվող պայքարի, տարածաշրջանային գերիշխանության համար մղվող հակամարտության սաստկացման, սուննի-շիա հակասությունների ահագնացող աճի և երբեմն նաև բախումների պայմաններում: Վերոհիշյալ գործընթացներում որոշիչ դերակատարություն ունեն Իրանը և Սաուդյան Արաբիան: Ուստի այդ երկու երկրների միջև հարաբերությունների ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս ոչ միայն ամբողջական պատկեր կազմել Մերձավոր Արևելքում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների վերաբերյալ, այլև հասկանալ զարգացումների խորքային պատճառներն ու դրանց հնարավոր հետևանքները ոչ միայն երկու երկրների, այլև ողջ տարածաշրջանի համար:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակն է համակողմանի ներկայացնել և վերլուծել վերոնշյալ ժամանակահատվածում Սաուդյան Արաբիայի տարածաշրջանային քաղաքականությունը սաուդա-իրանական հարաբերությունների լույսի ներքո: Սաուդա-իրանական հակասական հարաբերությունների բազմակողմանի հետազոտման նպատակով անդրադարձել ենք Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության ձևավորման հիմնական սկզբունքներին և ուղղություններին, ինչպես նաև ներկայացրել երկկողմ հարաբերությունները՝ տարածաշրջանային և միջազգային գործընթացների համատեքստում:

Սույն աշխատանքը կատարելիս դրվել են հետևյալ նպատակները՝

1. Լուսաբանել Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները (1950-1980 թթ.):
2. Վերլուծել 1979 թ. իրանական հեղափոխությունից հետո սաուդա-իրանական հարաբերությունների սրման դրդապատճառները:
3. Ներկայացնել Սաուդյան Արաբիայի տարածաշրջանային քաղաքականությունը, որն ուղղված էր Իրանի կողմից հեղափոխությունն արտահանելու փորձերին հակազդելուն:
4. Ուսումնասիրել սաուդա-իրանական հարաբերություններն իրան-իրաքյան պատերազմի ընթացքում:
5. Անդրադառնալ Սաուդյան Արաբիայի և Իրանի դիրքորոշումներին 1991 թ. միջազգային ռազմական կոալիցիայի՝ Իրաքի դեմ կատարված ռազմական գործողությունների հարցում:
6. Քննության ենթարկել Մերձավոր Արևելքում սաուդա-իրանական միջնորդավորված պատերազմները (Իրաք, Եմեն, Պաղեստին, Լիբանան):

7. Ներկայացնել պաղեստինյան հիմնախնդրի վերաբերյալ երկու երկրների ունեցած դիրքորոշումները:
8. Վերլուծել Սաուդյան Արաբիայի քաղաքականությունն Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ:

Ուսումնասիրության գիտական նորույթը. Սույն ատենախոսությունը իր բովանդակությամբ և համակողմանի հարցադրումներով առաջին փորձն է, որտեղ ուսումնասիրվում են սաուդա-իրանական հարաբերությունների առանձնահատկությունները ինչպես կրոնական (սուննի-շիա), այնպես էլ քաղաքական և տնտեսական հարթություններում: Այս թեման իր բովանդակությամբ և հարցադրումներով առաջին գիտական աշխատանքն է, որում փորձ է արվել հետազոտել երկկողմ հարաբերությունների առանձնահատկությունները, որոնք առանցքային նշանակություն ունեն Մերձավոր Արևելքի տարածաշրջանի նոր աշխարհաքաղաքական ճարտարապետության կերտման գործում:

Ուսումնասիրությունը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության հարևան երկիրն է և մեր երկրի ռազմավարական գործընկերը (Սաուդյան Արաբիայի հետ Հայաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ):

Ժամանակագրական սահմանները. Հետազոտության մեջ քննարկման է ենթարկվել սաուդա-իրանական հարաբերությունները 1979 թ. մինչև 2011թ.:

Աշխատանքի ժամանակագրական սահմանափակումը 2011 թվականով պայմանավորված է «Արաբական գարնան» հանգամանքով, որը սկիզբ դրեց տարածաշրջանային այնպիսի գործընթացների, որոնք մեր կարծիքով առանձին ուսումնասիրության կարիք ունեն, հատկապես՝ սաուդա-իրանական հարաբերություններում տեղ գտած զարգացումները:

Աշխատության մեթոդաբանական հիմքը. Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրվել է փաստերի ու աղբյուրների քննության պատմահամեմատական մեթոդը: Կիրառվել են աղբյուրների և գիտական գրականության համադրման ու վերլուծության մոտեցումները, որոնք հենվում են պատմագիտական սկզբունքների ու գիտական համադրության հնարավորությունների վրա:

Աշխատանքի կիրառական նշանակությունը. Սույն աշխատության մեջ առաջ քաշված հիմնադրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Սաուդյան Արաբիայի և Իրանի նորագույն պատմության առանձին հիմնահարցերին նվիրված ուսումնասիրություններում:

Ատենախոսությունն ունի նաև գործնական նշանակություն Հայաստանի արտաքին քաղաքական շրջանակների համար: Ներկայումս Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեն Իրանի և արաբական երկրների հետ համագործակցության խորացումը և

ընդլայնումը, ուստի այս տեսանկյունից աշխատության մեջ տեղ գտած մեկնաբանությունները, վերլուծությունները և եզրահանգումները կարող են օգտակար լինել մերձավորարևելյան տարածաշրջանի ամբողջական ընկալման համար՝ նպաստելով ՀՀ տարածաշրջանային քաղաքական ուղեգծի արդյունավետ իրականացմանը:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը. Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնում: Դրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն. Ատենախոսությունը գրվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն և արաբերեն տարբեր աղբյուրների և գրականության հիման վրա: Լայնորեն օգտագործվել են միջազգային փաստաթղթեր, արխիվային նյութեր, թեմայի վերաբերյալ արժեքավոր աշխատություններ, հոդվածներ, մամուլի հրապարակումներ, պաշտոնական հայտարարություններ, պարբերականներ:

Սույն աշխատանքի համար սկզբնաղբյուր են ծառայել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը[1], ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշումները[2], Իսլամական համագործակցության կազմակերպության հռչակագրերը[3], Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի կանոնադրությունը[4], Արաբական պետությունների լիգայի կանոնադրությունը[5], Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջը[6], Չեթոմ Հաուզի հրատարակությունը[7], Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցը[8], Միջազգային հարաբերությունների խորհրդի

[1] ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերը տե՛ս http://www.un.org/en/sc/documents/resolutions/.

[2] ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի որոշումներ և բանաձևերը տե՛ս http://research.un.org/en/docs/ga/resolutions.

[3] Իսլամական համագործակցության կազմակերպության հռչակագրերhttp, ://www.oic-oci.org/oicv3/home/?lan=en.

[4] ԾՀԽ պաշտոնական կայքէջ, https://www.gcc-sg.org/eng/indexfc7a.html?action=Sec-Show&ID=1.

[5] ԱՊԼ պաշտոնական կայքէջ, http://www.arableagueonline.org/.

[6] http://www.mofa.gov.sa/.

[7] Ginny H., Nonneman G., Yemen, Saudi Arabia and the Gulf States: Elite Politics, Street Protests and Regional Diplomacy, Chatham House, May 2011; http://www.chathamhouse.org/publications/papers/view/177061.

[8] Yemen: Defusing the Saada Time Bomb, Middle East Report N 86, International Crisis Group.May 1, 2009. http://www.crisisgroup.org/en/regions/middle-east-north-africa/iraq-iran-gulf/yemen/086-yemen-defusing-the-saada-time-bomb.aspx.

նյութերը[9], ԱԷՄԳ-ի հրապարակած համաձայնագիրը[10], ինչպես նաև «Նյու Յորք Թայմս»[11] թերթի արխիվը:

Պետք է հիշատակել աշխատության համար շատ կարևոր խորհրդային հեղինակներ Ա. Վասիլևի[12], Ռ. Մարգարյանի[13], Լ. Վալկովայի[14], Վ. Մաշինի, Ա. Յակովլևի[15] և Ե. Պրիմակովի[16] աշխատությունները:

Ռուսաստանցի հետազոտողներից հարկ է հատկապես առանձնացնել Գ. Կոսաչի[17], Ե. Մելքումյանի[18], Վ. Ուշակովի[19], Ի. Ալեքսանդրովի[20] և Կ. Բելաուսովի[21] աշխատությունները, որոնք օգտագործել ենք Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության, սաուդա-իրանական հարաբերությունների և ԾՀԽ-Իրան հարաբերությունների ներկայացման համար:

Հայ արևելագետներից հատկապես պետք է նշել Ն. Հովհաննիսյանի[22], Վ. Բայբուրդյանի[23], Ռ. Կարապետյանի[24], Գ. Գևորգյանի[25], Լ. Հարությունյանի[26] և

[9] Masters J. and Laub Z., Backgrounds:Hezbollah, Council on Foreign Relations (CFR) (January 3, 2014): 1, http://www.cfr.org/lebanon/hezbollah-k-hizbollah-hizbullah/p9155.
Levitt M, Hezbollah: The Global Footprint of Lebanon's Party of God, http://www.cfr.org/world/hezbollah-global-footprint-lebanons-party-god/p35535
Gwertzman B., Cirincione:Iran's New 'Hard Line' President Pushing Iran toward Security Council Action on Nuclear Issues, Council on Foreign Relations, January 5, 2006, http://www.cfr.org/iran/cirincione-irans-new-hard-line-president-pushing-iran-toward-security-council-action-nuclear-issues/p9495.

[10] IAEA, Communication dated 26 November 2004 received from the Permanent Representatives of France, Germany, the Islamic Republic of Iran and the United Kingdom concerning the agreement signed in Paris on 15 November 2004, INFCIRC/637, 26 November 2004, pp.2-4. https://www.iaea.org/sites/default/files/publications/documents/infcircs/2004/infcirc637.pdf

[11] New York Times Article Archive, http://www.nytimes.com/ref/membercenter/nytarchive.html.

[12] Васильев А. М., История Саудовской Аравии, Москва 1982.

[13] Маркарян Р. В., Зона Персидского Залива, Москва 1986.

[14] Валькова Л. В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, Москва, 1987.

[15] Машин В. В. , Яковлев А. И., Персидский Залив в планах и политике Запада, Москва, 1985.

[16] Примаков Е. М.,Анатомия ближневосточного конфликта, Москва, 1973.

[17] Косач Г. Г., Мелкумян Е. С, Внешняя политика Саудовской Аравии. Приоритеты, направления, процесс принятия решения,Москва, 2003.

[18] Мелкумян Е. С. , ССАГПЗ в глобальных и региональных процессах, Москва, 1999, Мирная инициатива Саудовской Аравии в контектсте ее внешней политики, Москва, 2002, Отношение арабских государств Персидского залива К Ирану:новые тендеции, Москва, 2002.

[19] Ушаков В. А., Иран и мусульманский мир, Москва, 1999.

[20] Александров И. А.,Монархии Персидского залива.этап модернизации, Москва, 2000.

[21] Белоусов К. А.,Политика США в нефтедобывающих странах Ближнего Востока в конце 1960-х-начале 1970-х гг., Москва, 2009.

[22] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր IV, Երևան, Զանգակ-97 2007:

[23] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, Զանգակ-97, 2005:

[24] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 200:, Կարապետյան Ռ., Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000թթ.), Կահիրե, 2008:

Ա. Փաշայանի[27] գիտական աշխատությունները: Մասնավորապես պետք է նշենք Ն. Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն» քառահատորյակը, որը մեծապես նպաստել է եզրահանգումների ձևավորման և վերլուծության հիմնավորման վրա:

Համացանցի առավել տեղեկատվական-գիտական և վստահելի կայքէջերում զետեղված փաստագրական և այլ տեսակի նյութերը նույնպես աղբյուր են հանդիսացել սույն աշխատանքի համար:

Աշխատանքում լայնորեն օգտագործվել են արաբ, իրանցի և իսրայելցի հեղինակների աշխատություններն ու հրապարակումները: Դրանց թվում են Աբդ ալ-Հալիմի[28], Ջ. Հուսեյնի[29], Գ. Բահգաթի[30], Հ. Սադեղիի և Հ. Ահմադիանի[31], Մ. Խադուրիի և Է. Ղարեբի[32], Կ. Ռամազանիի[33], Ջ. Ալ-Սուաիդիի[34], Մ. Զուեյրիի և Ա. Էհթեշամիի[35], Դ. Մենաշրիի[36], Բ. Մեդի-Վեյցմանի[37], Ռ. Սաիդ Զահլանի[38], Մ. Ալ-Ռաշեդի[39] և Ամիր Մ. Հաջի-Յուսեֆիի[40] աշխատությունները:

Մերձավոր Արևելքի վերաբերյալ յուրաքանչյուր գիտական աշխատանք կատարելիս դժվար է շրջանցել դասական դարձած այնպիսի հեղինակների

---

[25] Գևորգյան Գ., Եգիպտոսը և իրաքա-իրանյան պատերազմը (1980-1988 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 22, Երևան, 2003:

[26] Հարությունյան Լ., Լիբանանը կայունության և ճգնաժամի միջև», «21-րդ Դար», թիվ 2 (16),Երևան, 2007:

[27] Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը.նպատակները,գործունեությունը,դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Երևան, Զանգակ-97, 2003:

[28] الحرب العراقية الإيرانية ١٩٨٠-١٩٨٨, تأليف المشير عبد الحليم ابو غزاله,١٩٩٣-١٩٩٤.

[29] جعفر حسين نزار, الثورة الاسلامي ايران في, 1979

[30] Bahgat G., American Oil Diplomacy in the Persian Gulf and the Caspian Sea, University Press of Florida 2003.

[31] Sadeghi H. and Ahmadian H., Iran-Saudi Relations: Past Paettern, Future Outlook, Iranian Review of Foreign Affairs, Vol.I, No.4, Winter 2011.

[32] Khadduri M, Ghareeb E., War in the Gulf 1990-1991, Oxford University, 1997.

[33] Ramazani K., The Gulf Cooperation Council: Record and Analysis, The University Press of Virginia 1988.

[34] Al-Suwaidi J., Iran and the Gulf: A Search for Stability, Abu Dhabi, 1997.

[35] Ehteshami A., Zweiri M., Iran's Foreign policy: From Khatami to Ahmadinejad, Ithaca press 2008.

[36] Menashri D., Post-Revolutionsry politics in Iran: Religion, Society and Power, London 2001.

[37] Maddy-Weitzman B.,Middle East Contemporary Survey, Volume XXI,Moshe Dayan Center for Middle East and African studies 1997.

[38] Zahlan S., Palestine and the Gulf States: The Presence at the Table, New York, 2009.

[39] Al-Rasheed M., Kingdom Without Borders: Saudi Arabia's Political, Religious and Media Frontiers, Oxford University Press, 2008.

[40] Haji-Yousefi A., Iran's Foreign Policy during Ahmadinejad: From Confrontation to Accommodation, Concordia University, Montreal, 2010.

աշխատությունները, ինչպիսիք են Կ. Բրաունը[41], Ու. Քվանդտը[42] և Ք. Մարշալը[43]:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնք իրենց հերթին կազմված են ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում են հիմնական նպատակներն ու խնդիրները, պարզաբանվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը և թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Սաուդա-իրանական հարաբերությունների ձևավորումն ու ընթացքը՝ 1979 թ.-ի իրանական հեղափոխությունից հետո (1979-1988 թթ.)»,** անդրադառնում է Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններին, իրանական հեղափոխությունից հետո սաուդա-իրանական հարաբերությունների սրման դրդապատճառներին, ինչպես նաև իրան-իրաքյան պատերազմի ընթացքում Ծոցի տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին:

Առաջին ենթագլխում՝ **«Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները»,** ներկայացվում է, թե ինչ մեխանիզմներով է ընդունվում թագավորությունում արտաքին քաղաքականությանը վերաբերող որոշումները և քաղաքական ինչպիսի ուղեգիծ է մշակված իշխող վերնախավի կողմից:

Սաուդյան Արաբիայի քաղաքական համակարգը հիմնված է երեք հիմնական ճյուղերի (իրավական, օրենսդիր և գործադիր) համագործակցության վրա: Դրանք իրենցից ներկայացնում են այն մակարդակները, որոնց միջոցով տեղի է ունենում արտաքին քաղաքականության ձևավորումը, իսկ այնուհետև իրականացումը: Սաուդյան Արաբիայի թագավորը երկրի քաղաքական համակարգի կենտրոնական օղակն է և նախարարների խորհրդի ղեկավարն է: Նա է որոշում երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը, որն այնուհետև իրականացվում է համապատասխան կառավարական օղակների կողմից:

Թագավորի շրջապատն է ապահովում քաղաքական կուրսի իրագործման վերահսկողությունը: Այդ շրջապատում մեծ դեր և կշիռ ունի թագաժառանգը: Սա արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումների ընդունման ամենաբարձր մակարդակն է:

---

[41] Brown C., Diplomacy in the Middle East, London.New York, 2004.

[42] William B. Quandt, Saudi Arabia in the 1980s: Foreign Policy, Security, and Oi, Washington, 1981.

[43] Marschall C., Iran's Persian Gulf Policy, from Khomeini to Khatami, London 2003.

Թագավորության արտաքին քաղաքականությունը հայեցակարգային տեսանկյունից կարելի է բաժանել մի քանի կարևոր ուղղությունների՝ արաբական, անվտանգության, իսլամական և տնտեսական:

Երկրորդ ենթագլխում՝ **«Իսլամական հեղափոխությունը և սաուդա-իրանական հարաբերությունների սրման դրդապատճառները»,** ուսումնասիրվում է 1979թ. Իրանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո սաուդա-իրանական հարաբերությունների սրման հիմնական պատճառները: Հեղափոխության հետևանքով փոխվեց Պարսից ծոցի տարածաշրջանում առկա ուժերի հարաբերակցությունը՝ կրոնական, քաղաքական և տնտեսական տեսանկյուններից:

Մինչև հեղափոխությունը սաուդա-իրանական հարաբերությունները կրում էին լարված բնույթ: Դա պայմանավորված էր տարածաշրջանում առաջատար դիրքեր զբաղեցնելու համար մղվող պայքարով, ինչպես նաև նավթային գործոնով: Հեղափոխությունից հետո երկու երկրների միջև հարաբերություններն էլ ավելի բարդացան կրոնական գործոնի հետևանքով: Իրանը փորձում էր ստանձնել իսլամական աշխարհի առաջատարի դերը, որը մինչ այդ պատկանում էր Սաուդյան Արաբիային: Հակասությունների սրմանը նպաստում էր այն հանգամանքը, որ Իրանը հանդես էր գալիս շիա իսլամադավանների առաջնորդ, իսկ Սաուդյան Արաբիան՝ սուննիների: Արդյունքում իսլամական աշխարհի բաժանվածությունը ներիսլամական հենքի վրա էլ ավելի խորացավ՝ սուննի-շիա հակասությունները քաղաքական նպատակներով օգտագործելու պատճառով:

Երրորդ ենթագլխում՝ **«Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի ստեղծումը»**, ներկայացված է, թե ինչպիսի իրավիճակ էր Ծոցի տարածաշրջանում 1980-ականների սկզբին և ինչ զարգացումների արդյունքում Սաուդյան Արաբիան և Ծոցի սուննիական արաբական մյուս երկրները համախմբվեցին մեկ կազմակերպության մեջ:

Չորրորդ ենթագլխում՝ **«Իրան-իրաքյան պատերազմը և ուժերի նոր հարաբերակցությունը Ծոցի տարածաշրջանում»**, վերլուծության է ենթարկվում իրան-իրաքյան պատերազմի ընթացքում Սաուդյան Արաբիայի ունեցած դերակատարությունը: Սաուդյան Արաբիան, ինչպես նաև Քուվեյթն ակտիվորեն օգնում էին Իրաքին այս պատերազմում: Իրաքի ռազմական ինքնաթիռները բազմիցս վայրէջք էին կատարում Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի և Օմանի տարածքում: Բացի դրանից Ծոցի արաբական երկրները, մասնավորապես Սաուդյան Արաբիան, հսկայական ֆինանսական օգնություն էին ցույց տալիս Իրաքին պատերազմի տարիներին: 1981 թ. Իրաքին տրամադրված օգնության չափը կազմում էր 24 միլիոն դոլար, իսկ 1982 թ. վերջին հասնում էր մինչև 30, իսկ հետո նաև մինչև 40 միլիոն ԱՄՆ դոլարի: Ծոցի արաբական երկրների՝ Իրաքին տրամադրած ֆինանսական օգնության

մեծ մասը տրվում էր Սաուդյան Արաբիայի կողմից: Սաուդյան Արաբիան նույնիսկ թույլ տվեց իր տարածքում իրաքյան նավթամուղ կառուցել դեպի Կարմիր ծով՝ հնարավորություն տալով Բաղդադին թուլացնել Իրանի տնտեսական դիրքերը Ծոցում: Սաուդյան Արաբիայի տարածքը ծովային ճանապարհ էր ռազմական և քաղաքացիական ապրանքների համար, որոնք Սաուդյան Արաբիայից Իրաք էին տարվում բեռնատարներով:

Սաուդյան Արաբիայի նման բացահայտ օգնության ցուցաբերումն Իրաքին պայմանավորված էր առաջին հերթին Իրանի դիրքերը տարածաշրջանում թուլացնելու ձգտումով:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ **«Սաուդյան Արաբիան և Իրանը գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների պայմաններում (1990-ականներին և 2000-ականների սկզբին)»**, հանգամանորեն ուսումնասիրվում են սաուդա-իրանական հարաբերությունները 1990 թ. Իրաքի՝ Քուվեյթ կատարած ներխուժման և 1991 թ. Իրաքի դեմ միջազգային կոալիցիոն ուժերի ռազմական գործողությունների ժամանակ, ինչպես նաև 1990-ականների վերջում և 2000-ականների սկզբում երկկողմ հարաբերություններում առկա նոր իրողությունները:

Առաջին ենթագլխում՝ **«Իրաքյան զորքերի ներխուժումը Քուվեյթ և սաուդա-իրանական հարաբերությունները»**, ներկայացվում է Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման պատճառները: Նախքան ներխուժումը Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդն ամեն ինչ անում էր Իրաքին զսպելու և լարվածությունը մեղմացնելու համար: Նա այդ հարցում համագործակցում էր Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի հետ: Նրանք զսպվածության կոչ էին անում իրաքյան կողմին:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա Քուվեյթ ներխուժելուց հետո իրանական ղեկավարությունը քննադատեց Իրաքի իշխանություններին: Իրան-իրաքյան պատերազմի ավարտից հետո Իրանի ղեկավարությունը փորձում էր բարելավել հարևան երկրների հետ երկկողմ հարաբերությունները՝ հույս ունենալով ընդլայնել տնտեսական հարաբերությունները Սաուդյան Արաբիայի հետ և պահպանել հրադադարն իրան-իրաքյան սահմանին: 1990 թ. ապրիլին Իրանի արտաքին գործերի փոխնախարար Բեշարաթին այցելեց Կատար, Օման, ԱՄԷ և Բահրեյն, իսկ հուլիսին նախարար Վելայեթին այցելեց Ծոցի համագործակցության խորհրդի անդամ երկրներ տարածաշրջանային համագործակցության և երկկողմ հարաբերությունների ամրապնդման նպատակով՝ շեշտը դնելով նավթի ոլորտում համագործակցության և տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցերի վրա:

Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և Ծոցի արաբական մյուս երկրները դրական արձագանքեցին Իրանի կողմից հարաբերությունների բարելավմանն ուղղված քայլերին:

Երկրորդ ենթագլխում՝ **«Կոալիցիոն ուժերի ռազմական գործողություններն Իրաքի դեմ և սաուդա-իրանական հարաբերությունները հետպատերազմյան շրջանում»**, քննության են ենթարկվում Իրաքի դեմ միջազգային կոալիցիայի ռազմական գործողությունները, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի՝ կոալիցիային անդամակցությունը և Իրանի փորձերը դառնալ դիվանագիտական միջնորդ հակամարտող կողմերի միջև:

Հետպատերազմյան շրջանում սաուդա-իրանական հարաբերություններում պահպանվեցին գաղափարական և քաղաքական տարաձայնությունները: Սակայն մեկ այլ՝ տնտեսական բաղադրիչը նպաստեց, որպեսզի երկու երկրների ղեկավարությունները ճանապարհներ փնտրեն երկկողմ տնտեսական համագործակցության ընդլայնման համար: Փաստորեն երկկողմ հարաբերություններում միակ միավորող գործոնը տնտեսականն էր, որը սակայն չէր կարող մեղմել և նվազեցնել քաղաքական և կրոնա-գաղափարական տարաձայնությունները:

Երրորդ ենթագլխում՝ **«Սաուդա-իրանական հարաբերությունները 1990-ականների երկրորդ կեսին և 2000-ականների սկզբին»**, վերլուծության են ենթարկվում սաուդա-իրանական հարաբերություններում ի հայտ եկած նոր իրողությունները:

Սաուդյան Արաբիայի, Իրանի և ԾՀԽ անդամ երկրների միջև հարաբերություններում նոր էջ բացվեց 1997 թ., երբ Իրանում նախագահ դարձավ Մուհամմադ Խաթամին: Նա իր առջև նպատակ էր դրել Իրանը դուրս բերել միջազգային մեկուսացումից: Այդ նպատակի իրականացման համար նա սկսեց հարաբերությունները բարելավել հարևան երկրների՝ Իրաքի և ԾՀԽ անդամ երկրների հետ: Քաղաքական այս ուղեգիծը համընկնում էր ԾՀԽ անդամ երկրների շահերի հետ: Իրանի և ԾՀԽ երկրների միջև փոխադարձ վստահության մթնոլորտ ստեղծելու նպատակով 1997 թ. Թեհրանում կայանալիք Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ երկրների գագաթնաժողովի նախօրեին, Իրանի արտաքին գործերի նախարար Քամալ Խարազին այցելեց ԾՀԽ անդամ երկրների մայրաքաղաքներ: Սաուդյան Արաբիայում նրան ընդունեց Ֆահդ թագավորը, ում հետ հանդիպման ժամանակ արտգործնախարարը նշեց «հարաբերությունները բարելավելու կարևորության մասին»:

Թագաժառանգ Աբդուլլահը և արտգործնախարար Սաուդը մեկնեցին Թեհրան մասնակցելու ԻՀԿ գագաթնաժողովին: Այնտեղ Աբդուլլահն աննախադեպ հայտարարություն արեց: Նա գովաբանեց Իրանի նորընտիր նախագահ Խաթամիին և խոսեց քաղաքակրթության զարգացման մեջ Իրանի ունեցած մեծ դերի մասին:

Թեհրանի և Էր-Ռիյադի միջև հարաբերությունները բարելավելուն ուղղված հաջորդ քայլը՝ Իրանի նախկին նախագահ Ռաֆսանջանիի երկշաբաթյա այցն

էր Սաուդյան Արաբիա: Երկու երկրները ստեղծեցին համատեղ համագործակցության հանձնաժողով և պայմանավորվեցին խթանել մասնավոր հատվածի գործունեությունը:

Տարածաշրջանային անվտանգության ընդհանուր համակարգ ստեղծելուն ուղղված կարևորագույն քայլ էր Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև 2001 թ. կնքված Անվտանգության պակտը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ **«Սաուդյան Արաբիայի և Իրանի «միջնորդավորված պատերազմները» Մերձավոր Արևելքում և Իրանի միջուկային ծրագրի շուրջ զարգացումները»**, հանգամանորեն ուսումնասիրվում են Իրաքում, Եմենում, Լիբանանում և Պաղեստինում Սաուդյան Արաբիայի և Իրանի «միջնորդավորված պատերազմները» և Իրանի միջուկային ծրագրի անդրադարձը սաուդա-իրանական հարաբերությունների վրա:

Առաջին ենթագլխում՝ **«Իրաքը՝ սաուդա-իրանական հակասությունների խաչմերուկում»**, ներկայացվում է 2003 թ. Սադդամ Հուսեյնին հեռացնելուց հետո Իրաքում տիրող ներքաղաքական իրավիճակը:

Հետսադդամյան Իրաքը դարձել էր Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև միջնորդավորված պատերազմի կենտրոններից մեկը: 2003 թ. Սադդամ Հուսեյնի հեռացումից հետո սաուդա-իրանական հակամարտությունը տարածաշրջանային գերիշխանության համար ավելի թեժացավ: Ամերիկացիները փորձում էին Իրաքում դաշնակիցներ գտնել, որոնց կօգտագործեին երկրում հակաամերիկյան ուժերի դեմ պայքարելու համար: Այդ ուժերից էին նախկին բաասականները և ծայրահեղական սուննիական ֆունդամենտալիստները: Սակայն շիաների քաղաքական ճամբարին ցույց տված աջակցության հետևանքով ամրապնդվեցին Իրանի դիրքերը Իրաքի շիայական շրջաններում: Դա առաջացրեց Սաուդյան Արաբիայի դժգոհությունը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սաուդա-իրանական հակամարտությունը Եմենում»**, խոսվում է Եմենի միավորումից հետո երկրի ներքաղաքական կյանքում Սաուդյան Արաբիայի և Իրանի ունեցած դերակատարության մասին:

Եմենի միավորումից հետո Իրանը համագործակցում էր Եմենում Հուսի փոքրամասնության հետ, որը երկար տարիներ հակամարտության մեջ է եղել կառավարության հետ: Սաուդյան Արաբիան զգուշանալով Իրանի՝ տարածաշրջանում ազդեցության տարածման փորձերից, լուրջ ուշադրություն էր դարձնում Եմենում տեղի ունեցող իրադարձություններին: Ե՛վ Սաուդյան Արաբիան, և՛ Եմենը մեղադրում էին Իրանին Հուսի ապստամբներին օգնություն ցույց տալու մեջ, որը նույնպես շիայական ուղղության իսլամ էր դավանում: Իրանի վերնախավը շիայական կրոնական համերաշխության շրջանակներում միշտ հայտարարություններով աջակցություն էր ցուցաբերում հուսիներին:

Սակայն շատերը Իրանին մեղադրում էին, որ վերջինս հուսիներին օգնում է ֆինանսական միջոցներով, մարզելով և զինամթերքով:

Սաուդյան Արաբիան մտավախություն ուներ, որ հուսիների շարժումը շիայական իսլամի ավելի ծայրահեղ դրսևորումների կդիմի, եթե ամբողջովին վերահսկվի Իրանի կողմից:

Երրորդ ենթագլխում՝ **«Սաուդյան Արաբիայի և Իրանի դերակատարությունը Լիբանանի ներքաղաքական կյանքում»,** հանգամանորեն ուսումնասիրվում է Լիբանանի ներքաղաքական կյանքը:

Իրանն ամուր կապեր ունի Լիբանանի քաղաքական կազմակերպություններից մեկի՝ «Հիզբալլահի» հետ, որի հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս Իրանին խառնվել և մասնակցություն ունենալ Լիբանանի ներքաղաքական կյանքին:

Լիբանանի քաղաքական կյանքում «Հիզբալլահի» դիրքերի ամրապնդումը լուրջ մտահոգություն էր առաջացնում Սաուդյան Արաբիայում, քանի որ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում ձևավորվել էր «շիայական գոտի», որը պայմանավորված էր Իրաքում, Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում շիայական Իրանի ազդեցության մեծացմամբ: Այս կապակցությամբ Սաուդյան Արաբիայում կարծում էին, որ նման քաղաքական էքսպանսիան կարող էր իր տարածումն ունենալ նաև Պարսից ծոցում և սպառնալիք դառնալ թագավորության կենսական շահերի համար:

Չորրորդ ենթագլխում՝ **«Սաուդյան Արաբիայի և Իրանի քաղաքականությունը Պաղեստինի հարցում»**, ներկայացվում են պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման վերաբերյալ Սաուդյան Արաբիայի և Իրանի դիրքորոշումները:

Սաուդյան Արաբիան հանդես էր գալիս խաղաղ նախաձեռնություններով պաղեստինա-իսրայելական հակամարտության լուծման համար: Այն պատրաստ էր նաև ճանաչել Իսրայելի գոյությունը, վերջինիս կողմից պայմանների կատարման դիմաց: Իսկ Իրանը բացառում էր որևէ զիջում Իսրայելին և պնդում էր, որ հրեական պետությունը պետք է ոչնչացվի, իսկ բոլոր տեղահանված պաղեստինցիները պետք է վերադառնան իրենց երկիր:

Հինգերորդ ենթագլխում՝ **«Իրանի միջուկային ծրագիրը և սաուդա-իրանական հարաբերությունները»**, մանրամասն վերլուծության է ենթարկվում Իրանի միջուկային ծրագրի անդրադարձը սաուդա-իրանական հարաբերությունների վրա:

Իրանի միջուկային քաղաքականությունը փոխվեց, երբ 2005 թ. գարնանը իշխանության եկավ Մահմուդ Ահմադինեջադը: Դրանից հետո Իրանի քաղաքական ղեկավարությունը, մասնավորապես արտաքին քաղաքականության պատասխանատուները եկան այն եզրահանգման, որ ԱՄՆ-ի և Եվրոպայի գլխավոր նպատակը ոչ միայն Իրանի միջուկային ծրագրի

դադարեցմանն ուղղված շարունակական քայլերի ձեռնարկումն է, այլև դրա իսպառ դադարեցումը: Այդ իսկ պատճառով որոշում ընդունվեց փոխել արտաքին քաղաքական ուղեգիծը:

Սաուդյան Արաբիան մտավախություն ուներ, որ եթե շիայական Իրանը կարողանա ստեղծել ատոմային ռումբ, ապա դա պատճառ կհանդիսանա Ծոցի տարածաշրջանում ուժերի հավասարակշռության խախտման համար:

Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնախնդիրները և ներկայացվում ստորև շարադրված՝ հիմնական եզրահանգումները:

1. 1979 թ. շիայական հեղափոխությունից կարճ ժամանակ անց Իրանը դարձավ առաջին իսլամական հանրապետությունը տարածաշրջանում: Դա կարևոր նշանակություն ունեցող համաշխարհային իրադարձություն էր: Այն փոխեց Պարսից ծոցի տարածաշրջանում առկա ուժերի դասավորությունը՝ կրոնական, քաղաքական և տնտեսական տեսանկյուններից, և ազդարարեց նոր՝ «կրոնական» գործոնի մուտքը միջազգային քաղաքականության մեջ: Իրանը հայտ ներկայացրեց դառնալու իսլամական աշխարհի առաջնորդը: Մինչ այդ այս դերը վաղուց ստանձնել էր Սաուդյան Արաբիան: 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո սաուդա-իրանական հարաբերությունները ձեռք բերեցին «կայուն հակամարտության» բնույթ:

2. Տարածաշրջանում շիայական գործոնի ակտիվացման հետևանքով ստեղծվեց իրավիճակ, երբ Սաուդյան Արաբիան լրջորեն անհանգստանում էր իր անվտանգության համար: Նման անհանգստություն կար նաև Ծոցի մյուս արաբական երկրների մոտ: Այդուհանդերձ նրանք չէին ցանկանում, որ որևէ այլ օտար երկիր ապահովի իրենց անվտանգությունը, քանի որ փորձում էին խուսափել սեփական տարածքներում օտարերկրյա ռազմական բազաների տեղակայումից: Այդ իսկ պատճառով Ծոցի արաբական երկրների ղեկավարները շեշտում էին, որ իրենք պետք է համախմբվեն մեկ կազմակերպության մեջ, և համատեղ ուժերով ապահովեն իրենց անվտանգությունը՝ կանխելով որևէ այլ պետության զինուժի տեղակայումն իրենց երկրներում: Արդյունքում նման իրադարձությունները մեծապես արագացրեցին տարածաշրջանային նոր կազմակերպության՝ Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի ստեղծմանն ուղղված ջանքերը, հատկապես Սաուդյան Արաբիայի կողմից:

3. Իրան-իրաքյան պատերազմի սկզբնական փուլում տարածաշրջանում ստեղծվեց մի իրավիճակ, երբ Սաուդյան Արաբիան և Պարսից ծոցի արաբական մյուս երկրներն օգնում էին Իրաքին՝ կանխելու համար Իրանի ռազմական և հատկապես գաղափարական էքսպանսիան: Սաուդյան Արաբիան փորձում էր իր շուրջը համախմբել Պարսից ծոցի սունի վերնախավեր ունեցող արաբական երկրներին, ինչպես նաև վերջիններիս հետ համագործակցելով միջազգային

տարբեր կազմակերպություններում համոզել կողմերին հրադադար կնքել: Պետք է հստակ ընդգծել, որ թեև Սաուդյան Արաբիան խնդիրներ ուներ նաև Իրաքի հետ, սակայն Իրանից եկող վտանգը թագավորությանն ավելի էր անհանգստացնում:

4. Սաուդյան Արաբիան և Իրանը որդեգրեցին կոշտ և քննադատական դիրքորոշում Քուվեյթի դեմ իրաքյան ագրեսիայի նկատմամբ: Սակայն երկու երկրների միջև հարաբերությունները շարունակում էին մնալ ցածր մակարդակի վրա: Իրանը քննադատում էր Սաուդյան Արաբիային, քանի որ վերջինս տվել էր իր համաձայնությունը տարածաշրջանում օտար ուժերի ներկայության համար: Իրանը դեմ էր օտար ուժերի ներկայությանը տարածաշրջանում և այդ իսկ պատճառով իրանական հոգևոր վերնախավը կոշտ քննադատության էր ենթարկում Սաուդյան Արաբիային և անվանում Միացյալ Նահագների «կամակատարը»:

5. Իրանի չեզոքությունը Ծոցի երկրորդ ճգնաժամի ընթացքում նպաստեց սաուդա-իրանական հարաբերությունների լարվածության նվազեցմանը: Սաուդա-իրանական հարաբերություններում դրական տեղաշարժեր եղան հետպատերազմյան շրջանում: Երկու երկրները համաձայնության եկան վերաբացել դեսպանությունները մայրաքաղաքներում և բարձրացնել դիվանագիտական ներկայացվածությունը դեսպանի մակարդակի:

6. Այսուհանդերձ, հարկ է նշել, որ 1990-ականների սկզբին սաուդա-իրանական հարաբերություններում պահպանվեցին գաղափարական և քաղաքական տարաձայնությունները: Սակայն մեկ այլ՝ տնտեսական բաղադրիչը նպաստում էր, որպեսզի երկու երկրների ղեկավարությունները ճանապարհներ փնտրեն երկկողմ տնտեսական համագործակցության ընդլայնման համար: Փաստորեն, երկկողմ հարաբերություններում միակ միավորող գործոնը տնտեսականն էր, որը սակայն չէր կարող մեղմել և նվազեցնել քաղաքական և կրոնա-գաղափարական տարաձայնությունները:

7. Սաուդյան Արաբիայի, Իրանի և ԾՀԽ անդամ երկրների միջև հարաբերություններում նոր էջ բացվեց 1997 թ., երբ Իրանում նախագահ դարձավ Մուհամմադ Խաթամին: Վերջինս իր առջև նպատակ էր դրել Իրանը դուրս բերել միջազգային մեկուսացումից: Այդ նպատակի իրականացման համար նա սկսեց հարաբերությունները բարելավել հարևան երկրների՝ Իրաքի և ԾՀԽ անդամ երկրների հետ: Քաղաքական այս ուղեգիծը համընկնում էր ԾՀԽ անդամ երկրների շահերի հետ:

8. Չնայած տնտեսական համագործակցության ակտիվացմանը, Իրանի և ԾՀԽ անդամ երկրների միջև առկա էին հակասություններ տարածաշրջանային անվտանգության ապահովման հարցում: ԾՀԽ անդամ երկրները և Իրանը կողմ էին անվտանգության ապահովմանը միայն Ծոցի երկրների կողմից: Սակայն իրականացման ուղիների վերաբերյալ մոտեցումները տարբերվում էին: ԾՀԽ

անդամ երկրների կարծիքով անվտանգությունը պետք է երաշխավորվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների հետ համագործակցությամբ: Այդ նպատակով ԾՀԽ երկրները երկկողմ պաշտպանական համաձայնագրեր էին ստորագրել ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ:

9. Սաուդյան Արաբիայի և Իրանի պայքարը Եմենում դիրքերի ամրապնդման համար կապված է արաբական այդ անկայուն երկրի աշխարհագրական կարևոր դիրքով: Եմենում դիրքերի ամրապնդումը հնարավորություն է տալիս վերահսկողության տակ պահել Պարսից ծոցի երկրների էներգառեսուրսները եվրոպական երկրներ արտահանելու համար կարևորագույն ճանապարհներից մեկը՝ Բաբ Էլ-Մանդեբի նեղուցը: Ուստի Եմենում դիրքերն ուժեղացնելու համար պայքարը կարծում ենք կշարունակվի դեռ երկար ժամանակ, մասնավորապես հաշվի առնելով այն, որ աստիճանաբար վերացվում են Իրանի նկատմամբ պատժամիջոցները և նավթով հարուստ այդ երկիրը նույնպես արտահանելու է իր էներգառեսուրսները, որոնք պետք է անցնեն նույն ճանապարհով, ինչպես Սաուդյան Արաբիայինը և Ծոցի մյուս արաբական երկրներինը:

10. Մերձավոր Արևելքի տարածաշրջանում ձևավորված «շիայական գոտին», որը պայմանավորված էր Իրաքում, Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում շիայական Իրանի ազդեցության մեծացմամբ, կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ Մերձավոր Արևելքում հետագայում Սաուդյան Արաբիայի և Իսրայելի միջև համագործակցություն սկսվի ընդհանուր հակառակորդ Իրանին տարածաշրջանային պայքարում դիմակայելու նպատակով:

11. Եվ վերջապես, պետք է արձանագրել, որ ուսումնասիրվող շրջանում Սաուդյան Արաբիային և Իրանին չհաջողվեց հարթել հիմնական քաղաքական և գաղափարական տարաձայնությունները միմյանց միջև, որը հնարավորություն կտար կայունացնելու Մերձավոր Արևելքի տարածաշրջանը: Ներկայումս սուննի-շիա հակամարտության խստացման պայմաններում դժվար կլինի ակնկալել լուրջ բարելավում երկկողմ հարաբերություններում: Այդուհանդերձ, այդ հարաբերությունների ընթացքից է մեծապես կախված լինելու Մերձավոր Արևելքի տարածաշրջանի փոփոխվող աշխարհաքաղաքական պատկերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. 1979թ. հեղափոխությունը Իրանում և սաուդա-իրանական մրցակցության սկիզբը՝ իսլամական գերիշխանության համար, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու) N 9, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 98-106:

2. Սաուդա-իրանական հարաբերություններն Իրանում 2005 թ. նախագահական ընտրություններից հետո, Կանթեղ գիտական հոդվածներ 1 (66), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2016, էջ 122-129:

3. Սաուդյան Արաբիան և Իրանը Իրաքի դեմ կոալիցիոն ուժերի ռազմական գործողությունների ընթացքում (1991թ.), Լրաբեր հասարակական գիտությունների հանդես 1 (646), Երևան, 2016, էջ 108-115:

ВОСКАНЯН СЕРГЕЙ ВАРДАНОВИЧ

ОТНОШЕНИЯ САУДОВСКОЙ АРАВИИ И ИРАНА В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ САУДОВСКОЙ АРАВИИ (1979-2011 ГГ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- «Всемирная история».
Защита состоится 24-го июня 2016 г., в 13:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА,
по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Основная цель диссертации - представление и анализ региональной политики Саудовской Аравии и двусторонних отношений с Ираном в период с 1979 по 2011 гг. Для исследования противоречивых саудовско-иранских отношений мы сочли целесообразным рассмотреть основные принципы и направления внешней политики Саудовской Аравии, а также двусторонние саудовско-иранские отношения в контексте региональных и международных процессов.

Саудовская Аравия всегда играла значительную, а иногда и определяющую роль в политических, экономических и религиозных процессах Ближневосточного региона.

Основной соперник Саудовской Аравии в регионе - Иран, отношения с которым особенно после Исламской революции 1979г. приобрели характер "стойкого противостояния". Между Саудовской Аравией и Ираном имеются ряд основных проблем, анализ которых позволит составить более четкое представление о протекающих на Ближнем и Среднем Востоке политических процессов и о борьбе за региональное лидерство.

Работа состоит из введения, трех глав (каждая из которых состоит из разделов), заключения, использованных источников и списка литературы.

В введении обосновываются актуальность темы и научная новизна, представляются основные цели и задачи, разъясняются методологическая основа, применяемая значимость и выбор временных границ темы, дан краткий обзор использованной литературы.

В первой главе диссертационной работы **"Формирование и развитие саудовско-иранских взаимоотношений после Иранской революции 1979г. (1979-1988 гг.)"** исследуются основные направления внешней политики

Саудовской Аравии, причины обострения саудовско-иранских отношений после Исламской революции, а также развитие процессов в регионе Персидского залива во время Ирано-иракской войны.

После Исламской революции в Иране произошли значительные изменения в региональной политике Саудовской Аравии, которая начала остерегаться исходящей от Ирана угрозы и возможности экспорта исламской революции. Именно этим было обусловлено предоставление Саудовской Аравией Ираку значительной помощи во время ирано-иракской войны. В этот период борьба между Саудовской Аравией и Ираном распространилась на весь Исламский мир и стала причиной обострения глобального противостояния между шиитами и суннитами.

Во второй главе диссертации **"Саудовская Аравия и Иран в условиях геополитических изменений (в 1990-их и в начале 2000-их гг.)"** детально исследуются саудовско-иранские взаимоотношения во время вторжения Ирака в Кувейт в 1990г. и при военных действиях международных коалиционных сил против Ирака в 1991г., а также новых реалий двусторонних отношений конца 1990-ых и начала 2000-ых.

В 1990-ых в саудовско-иранских отношениях сохранялись идеологические и политические разногласия. Однако экономическая заинтересованность вынуждала руководство обеих стран искать пути расширения двустороннего сотрудничества. Фактически в двусторонних отношениях объединяющим являлся экономический фактор, который, к сожалению, не мог смягчить существующие политические и религиозно-идеологические противоречия.

В третьей главе диссертационной работы **"Опосредованные войны" Саудовской Аравии и Ирана на Ближнем Востоке и развития вокруг ядерной программы Ирана"**, детально исследуются "опосредованные войны" Саудовской Аравии и Ирана в Ираке, Йемене, Ливане и в Палестине и влияние ядерной программы Ирана на саудовско-иранские отношения.

В заключении представлены основные выводы, сделанные в результате работы.

VOSKANYAN V. SERGEY

SAUDI-IRANIAN RELATIONS IN THE CONTEXT OF SAUDI ARABIA'S REGIONAL POLICY (1979-2011)

The defense of the dissertation will take place at 13:00 on the 24th of June, 2016 at the meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

The main purpose of this thesis is to present and analyze Saudi Arabia's regional policy and the Saudi-Iranian relations during 1979-2011. In order to thoroughly investigate Saudi-Iranian contradictious relations we have reflected on the shaping of the main principles and directions of Saudi Arabia's foreign policy, as well as presented the bilateral relations in the context of regional and international processes.

Saudi Arabia's main regional competitor is Iran, relations with which, especially in the aftermath of the Islamic revolution of 1979, acquired characteristics of 'stable confrontation'. Between Saudi Arabia and Iran there are a number of major problematic issues the examination of which offers a comprehensive view of the political processes and the struggle fought for regional dominance in the Near and Middle East.

The thesis consists of an introduction, three chapters (comprised of subsequent sub-chapters), a conclusion and a list of reference sources and bibliography.

In the introduction the relevance of research and the scientific novelty are argued. Also, presented are the main goals and objectives, the methodological basis and the practical significance of the study are clarified on; justified is the choice of the chronological time-frame of the subject-matter, and a brief review of reference sources is provided.

The first chapter of the thesis entitled **"The formation and the development of Saudi-Iranian relations after the Iranian revolution of 1979 (1979-1988)"** deals with the main tendencies of Saudi Arabia's foreign policy, the reasons of escalation of tensions in Saudi-Iranian relations, as well as the regional developments in the Gulf area during the Iran-Iraq war.

After the Islamic revolution in Iran shifts have been observed to occur in Saudi Arabia's regional policy. The Kingdom started to feel alarmed vis-à-vis the threats emanating from Iran as far as the Islamic Republic had been attempting to export the revolution. This accounts for the large-scale assistance provided to Iraq by Saudi Arabia during the Iran-Iraq war. It was during this particular period when the Saudi-Iran confrontation spread throughout the entire Islamic world and caused an escalation in sunni-shia conflict.

The second chapter of the thesis, "**Saudi Arabia and Iran under the global geopolitical changes (1990s and the beginning of 2000s)**", thoroughly investigates the Saudi-Iranian relations during Iraq's invasion of Kuwait in 1990 and the military operations of the coalition forces against Iraq in 1991, as well as the new realities in emerged in the bilateral relations at the end of 1990s and the beginning of 2000s.

Ideological and political differences in the Saudi-Iranian relations persisted durind 1990s. However, another and, namely, the economic component, made the two countries explore ways to expand bilateral economic cooperation. In fact, the only unifying factor in the bilateral relations was the economic one, which, however, could not alleviate and reduce the political and religious and ideological differences.

In the third chapter of the thesis, **"Indirect Wars' between Saudi Arabia and Iran in the Middle East and the Developments around Iran's Nuclear Program"**, are thoroughly examined the 'indirect wars' between Saudia Arabia and Iran in Iraq, Yemen, Lebanon and Palestine and the impact of Iran's nuclear program on Saudi-Iranian relations.

In the **Conclusions** the main issues investigated in the thesis are summed up and the below key findings are presented.